

**Կենսաբանություն, I ՓՈԻԼ  
տևողությունը 90 րոպե  
9-րդ դասարան**

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Բջջում սպիտակուցի կենսասինթեզի գործընթացը դեկավարվում է**

- 1 – կորիզով
- 2– ցիտոպլազմայով
- 3 – միտոքոնդրիումով
- 4 – պլազմաին թաղանթով

**2. Ո՞ր գործընթացի արդյունքում է բջիջը ապահովվում էներգիայով**

1. - օրգանական նյութերի օքսիդացում մինչև անօրգանական նյութեր
2. – ջրի և ջրի մեջ լուծված նյութերի կլանում
- 3.– նյութերի տրանսպորտ բջջում
4. – սպիտակուցի մոլեկուլների սինթեզ

**3.Պոլիոմիելիտ հիվանդության պատճառ կարող են հանդիսանալ.**

- 1- բակտերիաները
- 2 - վիրուսները
- 3- թունավոր նյութերը
- 4- օրգանական նյութերը

**4. Երկրորդ խմբի արյուն կարելի է ներարկել .**

1. – առաջին կամ երկրորդ արյան խումբ ունեցող մարդկանց
2. – երկրորդ կամ երրորդ արյան խումբ ունեցող մարդկանց

3. – երկրորդ կամ չորրորդ արյան խումբ ունեցող մարդկանց
4. – միայն արյան առաջին խումբ ունեցող մարդկանց

**5. Ո՞ր նյութերի վրա է ազդում ստամոքսահյուսքը.**

1. - վիտամինների
2. - ճարպերի
3. - ածխաջրերի
4. - սպիտակուցների

**6.Աղեխորշվորների տիպին են պատկանում.**

1. ամեոբան
2. մեդուզան
3. անձրևորդը
4. եզան երիզորդը

**7. Հերմաֆրոդիտիզմը բնորոշ է:**

1. - անձրևորդին
2. - ասկարիդին
3. - մարդուն
4. - սրատուտին

**8. Ուղտի սիրտը .**

1. - երկխորշ է
2. – եռախորշ է
3. – քառախորշ է
4. – միախորշ է՝ բաց արյունատար համակարգով

**9. Օրգանիզմում քիմիական ռեակցիաների կատալիզատորներ են հանդիսանում.**

1. - վիտամինները
2. - հորմոնները

3. - գլիկոզենը
4. - ֆերմենտները

**10. Հավասար քանակությամբ քայլող ոտքերի զույգեր ունեն.**

1. Լողաբզեզը և խաչասարդը
2. կարիճը և տիզը
3. տիզը և ճպուռը
4. ճանճը և ջրալուն

**11. Պարզ ծաղկաբույլ ունի.**

1. յասամանը
2. արևածաղիկը
3. ցորենը
4. սամիթը

**12. Հյութալի պտուղ է:**

1. սերմիկը
2. կորիզապտուղը
3. ընկույզը
4. պատիճը

**13. Մնկերը բույսերից տարբերվում են հիմնականում նրանով, որ.**

1. ունեն բջջային կառուցվածք
2. հողից կլանում են ջուր և հանքային նյութեր
3. լինում են և միաբջիջ և բազմաբջիջ
4. չեն պարունակում իրենց բջիջներում քլորոպլաստներ և քլորոֆիլ

**14. Ամինաթթուները՝ դրանք կառուցվածքային միավորներն են.**

1. ճարպի
2. հեմոգլոբինի

3. ԴՆԹ-ի
4. օսլայի

**15. Միտոզի փուլերի հաջորդականությունը հետևյալն է.**

1. պրոֆազ, անաֆազ, թելոֆազ, մետաֆազ
2. անաֆազ, թելոֆազ, մետաֆազ, պրոֆազ
3. անաֆազ, մետաֆազ, պրոֆազ, թելոֆազ
4. պրոֆազ, մետաֆազ, անաֆազ, թելոֆազ

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

**16. Մարդու մարմնի զանգվածի  $n^{\circ}$  տոկոսն է կազմում արյունը:**

**17. Սալորենու (*Prunus Domestica*) արմատամազիկների բջիջներում 48 քրոմոսոմ է: Որոշեք քրոմոսոմների թիվը սալորի սաղմի շաքիլներում:**

**18. Արյան շրջանառության քանի՞ շրջան ունի ձուկը:**

**19. Քանի՞ սմ<sup>3</sup> է կազմում մարդու թոքերի շնչառական ծավալը :**

**20. Քանի՞ շնչառական շարժում է կատարում չափահաս մարդը մեկ րոպեում՝ գտնվելով արթուն և հարաբերական հանգստի պայմաններում:**